*Թարգմանված է անգլերենից:*

Առկա է կազմակերպության տարբերանշանը:

Հռոմ, Իտալիա                                   Հունիսի 19, 2019 թ.

# ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Սույնով հավաստում ենք, որ «Ջի․Պի․ Էնջիներիա Ս․ր․լ․ Ջեստիոնե Պրոջետի դի էնջիներիա» ընկերությունը, որի գլխամասային գրասենյակը գտնվում է Հռոմում (հասցե՝ Վիալե Տիցիանո 3), սահմանված կարգով գրանցված է Ինժեներական և տնտեսական խորհրդատվական կազմակերպությունների ասոցիացիայում (OICE): Գրանցման համար՝ 56/1987:

«Ջի․Պի․ Էնջիներիա Ս․ր․լ․ Ջեստիոնե Պրոջետի դի էնջիներիա» ընկերությունն ուսումնասիրություններ և նախագծման աշխատանքներ է կատարում քաղաքաշինության և տարածական պլանավորման, ճարտարապետության, քաղաքացիական շինարարության, հիդրոտեխնիկական կառույցների շինարարության և ճանապարհաշինության, բնապահպանության, գյուղատնտեսության և համայնքների զարգացման ոլորտում:

Ինժեներական և տնտեսական խորհրդատվական կազմակերպությունների ասոցիացիան ունի 338 գրանցված անդամ և Իտալական արդյունաբերության համընդհանուր կոնֆեդերացիայում ներկայացնում է Իտալիայում և արտասահմանում գործող ինժիներական, ճարտարագիտական և տեխնիկական խորհրդատվական ընկերությունները:

Միջազգային հարթակում Ինժեներական և տնտեսական խորհրդատվական կազմակերպությունների ասոցիացիան Ինժեներական խորհրդատվական ասոցիացիայի Եվրոպական ֆեդերացիայի (EFCA) գրանցված անդամ է, որը համախմբում է ինժեներական և ճարտարագիտական ընկերությունների եվրոպական ասոցիացիաները: Այն նաև անդամակցում է Ինժեներ-խորհրդատուների միջազգային ֆեդերացիային (FIDIC):

Ի վկայություն՝

Գաբրիելե Շիկոլոնե    [ստորագրություն]